


iSeq 100 Սերվենավորման համակարգ

Տեղանքի նախապատրաստման ուղեցույց

Ներածություն	3
Առաքում և տեղադրում	4
Լաբորատորայի պահանջներ	6
Էլեկտրականության պահանջներ	8
Հոսանքի անխափան սնուցման սարք	9
Շրջակա միջավայրի պահպանման նկատառումներ	10
Խնամորդ ցանց և Վերահսկող համակարգչի ուղեցույցներ	10
Օգտվողի կողմից մատակարարվող ծախսվող նյութեր և սարքավորումներ	16
Փոփոխությունների պատմություն	19
Տեխնիկական աջակցություն	21



Սույն փաստաթուղթը և դրա բովանդակությունը հանդիսանում են Illumina, Inc.-ի և վերջինիս մասնաձյուղերի («Illumina») սեփականությունը, և նախատեսված են միմիայն իր հաճախորդի կողմից պայմանագրային օգտագործման համար՝ կապված այստեղ նկարագրված արտադրանք(ներ)ի օգտագործման հետ և ոչ որևէ այլ նպատակով: Սույն փաստաթուղթը և դրա բովանդակությունը չպետք է օգտագործվեն կամ տարածվեն որևէ այլ նպատակով և/կամ այլապես փոխանցված, բացահայտված կամ վերարտադրված այլ ձևով՝ առանց Illumina-ի նախօրոք գրավոր համաձայնության: Սույն փաստաթղթով Illumina-ն իր արտոնագրի, ապրանքանշանի, հեղինակային իրավունքի կամ ընդհանուր օրենքի իրավունքների կամ նմանատիպ իրավունքների ներքո որևէ երրորդ կողմերին չի փոխանցում որևէ լիցենզիա:

Սույն փաստաթղթի հրահանգները պետք է խստորեն և հստակորեն պահպանվեն որակավորված և պատշաճ վերապատրաստված անձնակազմի կողմից՝ ապահովելու այստեղ նկարագրված արտադրանք(ներ)ի պատշաճ և անվտանգ գործարկումը: Սույն փաստաթղթի ողջ բովանդակությունը պետք է ամբողջովին կարդալ և հասկանալ, նախքան նման արտադրանք(ներ)ի կիրառումը:

ԱՅՍՏԵՂ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀՐԱՅԱՆԳՆԵՐԻ ՈՉ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԵՎ ԶՅՏԵՎՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՑՑԵԼ ԱՐՏԱԴՐԱՆՔ(ՆԵՐ)Ի ՎՆԱՍ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎՆԱՍՎԱԾԸ, ՆԵՐԱՌՅԱԼ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎՆԱՍ, ՈՐՆ ԷԼ ԿՅԱՆԳԵՑՆԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ(ՆԵՐ)Ի ՑԱՆԿԱՑԱԾ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՐԱՇՆԻՔԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆԸ:

ILLUMINA-Ն ՉԻ ՀԱՆՁՆԱՌՈՒՄ ՈՐԵՎԷ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՐՆ ԱՌԱՋԱՑԵԼ Է ԱՅՍՏԵՂ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔ(ՆԵՐ)Ի ՈՉ ՊԱՏՇԱՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ (ՆԵՐԱՌՅԱԼ ՎԵՐՁԻՆՆԵՐԻՍ ՄԱՍԵՐԸ ԿԱՄ ԾՐԱԳՐԱԾԱՐԸ):

©2020 Illumina, Inc.: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Բոլոր ապրանքային նշանները հանդիսանում են Illumina, Inc.-ի սեփականությունը կամ դրանց համապատասխան սեփականատերերինը: Ապրանքային նշանների վերաբերյալ որոշակի տեղեկությունների համար անցեք www.illumina.com/company/legal.html հղումով:

Ներածություն

Այս ուղեցույցում ներկայացված են Illumina® iSeq™ 100 Սեքվենավորման համակարգի տեղադրման և շահագործման բնութագրերը և ուղեցույցները ձեր տեղանքի նախապատրաստման համար:

- ▶ Առաքման և տեղադրման նկատառումներ
- ▶ Լաբորատոր տարածքի պահանջներ
- ▶ Էլեկտրականության պահանջներ
- ▶ Շրջակա միջավայրի սահմանափակումներ
- ▶ Համակարգչային պահանջներ
- ▶ Օգտվողի կողմից մատակարարվող ծախսվող նյութեր և սարքավորումներ

Անվտանգության նկատառումներ

Անվտանգության նկատառումների վերաբերյալ կարևոր տեղեկությունների համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի անվտանգության և համապատասխանության ուղեցույց (փաստաթղթի համարը՝ 1000000035336)*:

Լրացուցիչ միջոցներ

Illumina-ի կայքում [iSeq 100 Սեքվենավորման համակարգի աջակցության էջերը](#) տրամադրում են համակարգի հավելյալ միջոցներ: Այս միջոցները ընդգրկում են ծրագրաշարը, վերապատրաստում, համատեղելի արտադրանքներ և հետևյալ փաստաթղթերը: Մշտապես ստուգեք աջակցման էջերը՝ առավել նոր տարբերակների համար:

Միջոց	Նկարագրություն
<i>Օգտվողի պրոտոկոլի ընտրիչ</i>	Վերջնական հրահանգներ ստեղծելու գործիք՝ հարմարեցրած ձեր դարանի նախապատրաստման եղանակին, գործարկման հարաչափերին, վերլուծության եղանակին, որն ունի մանրամասների մակարդակների գտման ընտրանքներ:
<i>iSeq 100 Սեքվենավորման համակարգի տեղակայման պաստառ (փաստաթղթի համարը՝ 1000000035963)</i>	Տրամադրում է սարքի տեղադրման և առաջին անգամ կարգավորումը սկսելու հրահանգներ:
<i>iSeq 100 Սեքվենավորման համակարգի անվտանգության և համապատասխանության ուղեցույց (փաստաթղթի համարը՝ 1000000035336)</i>	Տրամադրում է տեղեկություններ աշխատանքային անվտանգության նկատառումների, համապատասխանության հայտարարագրերի և սարքի պիտակավորման վերաբերյալ:
<i>RFID Շնթերցիչի համապատասխանության ուղեցույց (փաստաթղթի համարը՝ # 1000000002699)</i>	Տրամադրում է տեղեկություններ սարքի RFID ընթերցիչի վերաբերյալ, ներառյալ համապատասխանության արտոնագրերը և անվտանգության նկատառումները:
<i>iSeq 100 Սեքվենավորման համակարգի ուղեցույց (փաստաթղթի համարը՝ # 1000000036024)</i>	Տրամադրում է սարքի և փոխկապակցված գործընթացների ամփոփ նկարագրությունը: Սարքի բաղադրիչները, ռեագենտների բաղադրիչները, օգտագործման հրահանգները, ինչպես նաև սպասարկման և անսարքությունների հեռացման գործընթացները ներառված են:

Առաքում և տեղադրում

iSeq 100 Համակարգը նախատեսված է օգտվողի կողմից տեղադրման համար: Տեղադրման հրահանգները տրամադրված են *iSeq 100 Սեքվենավորման համակարգի տեղակայման պաստառում (փաստաթղթի համարը՝ # 1000000035963)*, որն առաքվում է սարքի հետ:

Տեղադրումից հետո կարող եք տեղափոխել սարքը՝ USB միացքները և հետևի վահանակի այլ մասերը մատչելու համար: Սարքի տեղափոխման վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի ուղեցույցը (փաստաթղթի համարը՝ # 1000000036024)*:

Առաջին անգամ կարգավորում

iSeq 100 Համակարգի փաթեթավորումից հանելը և տեղադրումը տևում է մոտ 30 րոպե: Տեղադրումը ներառում է սարքի միացումը հոսանքի և ինտերնետի աղբյուրներին, սարքի միացումը, և Էկրանին ցուցադրվող հուշումներին հետևումը՝ համակարգի ստուգման և ծրագրաշարի կազմաձևման համար: Համակարգի ստուգման համար պահանջվում է փորձարկման վերաօգտագործելի քարտրիջը և փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջը:

Նախապես պատրաստեք լաբորատորիայի տարածքը, որպեսզի պատրաստ լինեք համակարգը բացելուն և տեղադրելուն, երբ ստանաք այն: Եթե սարքը կապակցում եք ցանցի պահեստին, նախքան տեղադրումը գտեք ցանցը:



ՆՇՈՒՄ

Համակարգի հավելումը ցանցին կարող է պահանջել լրացուցիչ ժամանակ: Որպես տեղադրման մաս՝ Illumina-ն խորհուրդ է տալիս նախօրոք խորհրդակցել ձեր SS մասնագետի հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք *Խնամողի ցանց և Վերահսկող համակարգի ուղեցույցներ էջ 10-ում*:

Տեղադրման համար բոլոր պահանջվող բաղադրիչներն առաքվում են սարքի հետ: Լրացուցիչ գործիքներ չեն պահանջվում:

Գաղտնաբառի փոխում

Windows օպերացիոն համակարգն ունի երկու հաշիվ՝ ադմինիստրատոր (sbsadmin) և ստանդարտ օգտվող (sbsuser): Առաջին անգամ օպերացիոն համակարգ մուտք գործելիս անհրաժեշտ է փոխել երկու հաշվի գաղտնաբառերը:

Օպերացիոն համակարգը ցուցադրում է յուրաքանչյուր հաշվի օգտվողի անունը և կանխադրված գաղտնաբառը: Պատճենեք sbsadmin-ի գաղտնաբառը, ապա sbsuser-ինը՝ գաղտնաբառի պահանջվող փոփոխությունն իրականացնելու համար: Նոր գաղտնաբառը պետք է պարունակի առնվազն 10 գրանիշ:

Շարունակեք առաջին անգամ կարգավորումը sbsuser-ում: Եթե ցանկանում եք անհատականացնել ցանցի կարգավորումները, փոխեք հաշիվը sbsadmin-ի:

Առաքման տուփի պարունակությունը

Սարքը և բաղադրիչներն առաքվում են առաքման մեկ դարչնագույն տուփով: Առաքման դարչնագույն տուփը պարունակում է երկու տուփ: սարքը պարունակող սպիտակ տուփ և պիտույքների տուփ, որը պիտակավորված է «iSeq 100 Սեքվենավորման համակարգի պիտույքներ» պիտակով:

Ներառված են հետևյալ բաղադրիչները:

- ▶ Ethernet մալուխ
- ▶ Հոսանքի լար

- ▶ iSeq 100 Փորձարկման վերաօգտագործելի քարտրիջ
- ▶ iSeq 100 Փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջ
- ▶ iSeq 100 Օդի զտիչ (պահուստային)
- ▶ iSeq 100 Կաթոցի դարակի հարթակ (պահուստային)
- ▶ *iSeq 100 Սեքվենավորման համակարգի տեղակայման պաստառ (փաստաթղթի համարը՝ # 1000000035963)*
- ▶ *Չաճախորդի համար կարևոր տեղեկություններ (փաստաթղթի համարը՝ # 1000000047543)*



ՆՇՈՒՄ

Ուղեցույցները, ներառյալ համակարգի ուղեցույցը, սարքի հետ չեն առաքվում, քանի որ հասանելի են առցանց: Տեսեք [Լրացուցիչ միջոցներ էջ 3-ում](#):

Արկղի չափսերը

Օգտվեք արկղի հետևյալ չափսերից՝ տեղափոխման, կարգավորման և պահեստավորման պլանավորման համար:

Աղյուսակ 1 Դարչնագույն տուփ

Չափառություն	Չափ
Բարձրություն	49,5 սմ (19,5 դյմ)
Լայնություն	56,3 սմ (21 դյմ)
Խորություն	58,4 սմ (23 դյմ)
Զաշ	21 կգ (47 ֆնտ)

Աղյուսակ 2 Սպիտակ տուփ

Չափառություն	Չափ
Բարձրություն	35,6 սմ (14 դյմ)
Լայնություն	43,2 սմ (17 դյմ)
Խորություն	43,2 սմ (17 դյմ)
Զաշ	17 կգ (38 ֆնտ)

Աղյուսակ 3 Պիտույքների տուփ

Չափառություն	Չափ
Բարձրություն	8,9 սմ (3,5 դյմ)
Լայնություն	33 սմ (13 դյմ)
Խորություն	21,6 սմ (8,5 դյմ)
Զաշ	0,82 կգ (1,8 ֆնտ)

Փորձարկման վերաօգտագործելի բաղադրիչներ և պահեստամասեր


Պահեք հետևյալ բաղադրիչները սենյակային ջերմաստիճանում, բնօրինակ փաթեթավորմամբ՝ փորձարկման վերաօգտագործելի քարտրիջը, փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջը, օդի պահուստային զտիչը, կաթոցի դարակի պահուստային հարթակը: Ըստ անհրաժեշտության հանեք պահեստից՝ համակարգի սպասարկման և անսարքությունների վերացման համար:

- ▶ Առաջին անգամ կարգավորումից հետո փորձարկման վերաօգտագործելի քարտիչը և հոսքի բջիջն իրականացնում են համակարգի հետագա ցանկացած ստուգումները: Փոխարինեք 5 տարի հետո կամ 130 օգտագործումից հետո, որն էլ տեղի ունենա առաջինը:
- ▶ Առաջին անգամ կարգավորումից վեց ամիս հետո օդի տեղադրված գտիչը պետք է փոխարինվի օդի պահուստային գտիչով:
- ▶ Երբևէ արտահոսք առաջանալու դեպքում, տեղադրված կաթոցի դարակի հարթակը պետք է փոխարինել կաթոցի դարակի պահուստային հարթակով:

Լաբորատորայի պահանջներ

Ջեռուեք այս բաժնում ներկայացված բնութագրերին և պահանջներին՝ ձեր լաբորատորիայի տարածքը կարգավորելու համար:

Սարքի չափսերը



Չափառություն	Տեղադրված սարքի չափսերը
Բարձրություն (բարձրացված մոնիտորի դեպքում)	42,5 սմ (16,8 դյմ)
Լայնություն	30,5 սմ (12 դյմ)
Խորություն	33 սմ (13 դյմ)
Քաշ	16 կգ (35 ֆունտ)

Տեղադրման պահանջներ

Տեղադրեք սարքը՝ ապահովելով պատշաճ օդափոխում և սպասարկման հասանելիություն: Պահպանեք հեռավորության հետևյալ նվազագույն չափերը՝ ապահովելու սարքի հասանելիությունը բոլոր կողմերից:

Հասանելիություն	Նվազագույն հեռավորություն
Կողմեր	Պահպանեք առնվազն 30 սմ (12 դյմ) տարածք սարքի յուրաքանչյուր կողմում:
Ջեռուի կողմ	Պահպանեք առնվազն 15,25 սմ (6 դյմ) տարածք սարքի հետևի կողմում:
Վերին կողմ	Պահպանեք առնվազն 30 սմ (12 դյմ) տարածք սարքի վերևից (իջեցված մոնիտորի դեպքում):

- ▶ Զամոզվեք, որ սարքի աջ կողմը հասանելի է՝ հետևի վահանակի վրա գտնվող հոսանքի փոխարկիչը մատչելու համար:
- ▶ Տեղադրեք սարքն այնպես, որպեսզի կարողանաք արագորեն անջատել հոսանքի լարը վարդակից:

Լաբորատոր սեղանի ուղեցույցներ

Սարքը պարունակում է ճշգրտման օպտիկական տարրեր: Տեղադրեք սարքն ամուր և հարթ լաբորատոր սեղանի վրա՝ թրթռման աղբյուրներից հեռու:

Թրթռոցի ուղեցույց

Սեքվենավորման գործարկումների ժամանակ օգտագործեք հետևյալ լավագույն փորձերը՝ նվազեցնելու շարունակական և ընդհատվող թրթռոցներն ու ապահովելու օպտիմալ արդյունավետություն:

- ▶ Զեռու պահեք լաբորատոր սեղանը թրթռոցի հևարավոր աղբյուրներից, օրինակ՝
 - ▶ Խառնիչներ, հեղուկների խառնիչներ, ցենտրիֆուգաներ, գզրոցներ, պահարաններ և դարակներ, որոնք կարող են առաջացնել չկանխատեսված ցնցումներ սեղանի մակերեսին:
 - ▶ Սեղմված օդ կամ ազոտ և օդի մեծ հոսքերը:
- ▶ Պահպանեք մաքրման տարածքի կոկիկությունը:
- ▶ Մի տեղադրեք օգտագործված ծախսված նյութերը կամ լաբորատոր այլ գործիքները և պիտույքները սարքի վրա:
- ▶ Սարքից օգտվելիս օգտագործեք միայն հպելկրան մոնիտորը և ծախսվող նյութերի բեռնման և բեռնաթափման խորհուրդ տրվող աշխատահոսքը:
- ▶ Մի ազդեք սարքի մակերեսներին:

iSeq 100 i1 Ռեագենտ v2-ի պահեստավորման պահանջներ

Զետևյալ աղյուսակում ներկայացված են iSeq 100 i1 Ռեագենտ v2, մեկանգամյա օգտագործման ռեագենտ հավաքածուի մեջ ներառված բաղադրիչների պահեստավորման ջերմաստիճանը և չափսերը:

Բաղադրիչ	Պահեստավորման ջերմաստիճան	Երկարություն	Լայնություն	Բարձրություն
Քարտրիջ	-25°C-ից -15°C	19,6 սմ (7,7 դյմ)	13,7 սմ (5,4 դյմ)	13 սմ (5 դյմ)
Յուսքի բջիջ	2°C-ից 8°C*	10,2 սմ (4 դյմ)	10,2 սմ (4 դյմ)	2,5 սմ (1 դյմ)

*Առաքվել է սենյակային ջերմաստիճանում:

Լաբորատորիայի կարգավորումը ՊՇՌ գործընթացների համար

Լաբորատորիայի նախապատրաստման որոշ մեթոդներ պահանջում են Պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) գործընթացներ:

Ապահովեք հատկացված տարածքները և լաբորատոր գործընթացները՝ կանխելու ՊՇՌ արտադրանքի կողմից աղտոտումը, նախքան լաբորատոր գործողությունների մեկնարկը: ՊՇՌ արտադրանքները կարող են աղտոտել ռեագենտները, գործիքները և նմուշները՝ հետաձգելով պատշաճ աշխատանքային գործընթացները և առաջացնելով սխալ արդյունքներ:

Մինչև Պոլիմերազային շղթայական ռեակցիան (ՊՇՌ) և դրանից հետո տարածքները

Օգտվեք հետևյալ ուղեցույցներից՝ խաչաձև աղտոտումից խուսափելու համար:

- ▶ Հատկացրեք մինչև ՊՇՌ-ի տարածք՝ մինչև ՊՇՌ-ն գործընթացների համար:
- ▶ Հատկացրեք ՊՇՌ-ից հետո տարածք՝ ՊՇՌ-ի արտադրանքները մշակելու համար:
- ▶ Մի օգտագործեք միևնույն տարան՝ մինչև ՊՇՌ-ն և ՊՇՌ-ից հետո նյութերը լվանալու համար:
- ▶ Մի օգտագործեք ջրի մաքրման միևնույն համակարգը՝ մինչև ՊՇՌ-ն և ՊՇՌ-ից հետո տարածքների համար:
- ▶ Մինչև ՊՇՌ-ն գործողությունների համար օգտագործված պարագաները պահեք մինչև ՊՇՌ-ի տարածքում: Տեղափոխեք դրանք ՊՇՌ-ից հետո տարածք ըստ անհրաժեշտության:

Սարքավորումների և պարագաների հատկացում

- ▶ Մի համօգտագործեք սարքավորումները և պարագաները մինչև ՊՇՌ-ն և ՊՇՌ-ից հետո գործընթացների միջև: Հատկացրեք առանձին սարքավորումներ և պարագաներ յուրաքանչյուր տարածքում:
- ▶ Սահմանեք նախատեսված պահեստավորման տարածքներ և ծախսվող նյութեր յուրաքանչյուր տարածքում:

Էլեկտրականության պահանջներ

Հոսանքի բնութագրեր

Տեսակ	Բնութագիր
Գծի լարում	Փոփոխական հոսանքի 100–240 Վ 50/60 Հց պայմաններում
Հոսանքի առավելագույն ծախսը	80 Վատտ

Պահանջվում է Էլեկտրական հոսանքի հողանցում: Եթե լարման տատանումը 10%-ից ավելի է, անհրաժեշտ է հոսանքի գծի կարգավորիչ:

Պաշտպանիչ հողանցում



Գործիքի պատյանի միջոցով միացված է պաշտպանիչ հողանցմանը: Հոսանքի լարի անվտանգության գոտին պաշտպանիչ հողանցումը փոխանցում է ապահով վայր: Հոսանքի լարի միացումը պաշտպանիչ հողանցմանը պետք է լինի պատշաճ աշխատանքային կարգավիճակում սարքն օգտագործելիս:

Հոսանքի լարեր

Սարքն ապահովված է Միջազգային Էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (IEC) 60320 C13 միջազգային ստանդարտին համապատասխանող ընդունիչով, որն առաքվում է տարածաշրջանին համապատասխան հոսանքի լարով: Հյուսիսային Ամերիկային համապատասխանող լարն ունի 2,44 մ (8 ֆտ) երկարություն: Մնացած բոլոր լարերն ունեն 2,5 մ (8,2 ֆտ) երկարություն: Տեղական ստանդարտներին համապատասխանող համարժեք ընդունիչներ կամ հոսանքի լարեր ձեռք բերելու համար կապվեք երրորդ կողմի մատակարարի հետ, օրինակ՝ Interpower Corporation (www.interpower.com):

Միայն այն ժամանակ, երբ հոսանքի լարն անջատվում է փոփոխական հոսանքի սնուցման աղբյուրից, վտանգավոր լարումները հեռացվում են սարքից:

Ապահովիչներ

Հոսանքի մուտքի մոդուլը ներառում է բարձր լարման մուտքային գծերի վրա երկու մուտքային ապահովիչներ: Ապահովիչները 5 մմ և 20 մմ չափերի են և գնահատված են 10 Ամպեր, 250 VAC, դանդաղ պայթյունի:

Հոսանքի անխափան սնուցման սարք

Illumina-ն խորհուրդ է տալիս օգտագործել ձեր տարածաշրջանին համապատասխան հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)՝ առնվազն 500 ՎԱ հզորությամբ: Հետևյալ աղյուսակում բերված են երեք օրինակ-մոդելներ: Գործարկման ժամանակը (մարտկոցի լիցքի տևողությունը) կախված է ընտրված UPS մոդելից, UPS-ի մարտկոցի հնությունից և որակից:

Աղյուսակ 4 Տարածաշրջանին բնորոշ առաջարկություններ

Բնութագիր	Ճապոնիա APC Smart-UPS 750 LCD 100 Վ Մասի համարը՝ # SMT750J	Հյուսիսային Ամերիկա APC Smart-UPS 750 ՎԱ LCD 120 Վ US Մասի համարը՝ # SMT750US	Միջազգային APC Smart-UPS 750 ՎԱ LCD 230 Վ Մասի համարը՝ # SMT750I
Առավելագույն ելքային հոսանք	500 Վտ / 750 VA	500 Վտ / 750 VA	500 Վտ / 750 VA
Մտնող լարում (անվանական)	Փոփոխական հոսանքի 100 Վ	Փոփոխական հոսանքի 120 Վ	Փոփոխական հոսանքի 230 Վ
Մուտքի կապակցում	NEMA (Էլեկտրական սարքավորումների արտադրողների ազգային ասոցիացիա) 5-15Պ	NEMA (Էլեկտրական սարքավորումների արտադրողների ազգային ասոցիացիա) 5-15Պ	IEC-320 C14 (Էլեկտրատեխնիկայի միջազգային հանձնաժողով) Schuko (Շուկո) CEE 7/EU1-16P Բրիտանական BS1363A
Չափսեր՝ (Ը ճ Լ ճ Խ)	16,7 սմ ճ 14 սմ ճ 36 սմ (6,6 դյմ ճ 5,5 դյմ ճ 14,2 դյմ)	16 սմ ճ 13,8 սմ ճ 36,3 սմ (6,3 դյմ ճ 5,4 դյմ ճ 14,3 դյմ)	15,7 սմ ճ 13,8 սմ ճ 35,8 սմ (6,2 դյմ ճ 5,4 դյմ ճ 14 դյմ)
Քաշ	13,2 կգ (29 ֆնտ)	13,2 կգ (29 ֆնտ)	13,2 կգ (29 ֆնտ)
Գործարկման մոտավոր ժամանակը UPS-ի հոսանքով	~95 րոպե	~95 րոպե	~95 րոպե

Illumina-ն պատասխանատվություն չի կրում այն գործարկումների համար, որոնք ենթարկվել են ընդհատված հոսանքի ազդեցությանը, անկախ այն հանգամանքից՝ արդյոք սարքը միացված է UPS-ին: Գեներատորով սնուցվող ստանդարտ հոսանքը կարող է ընդհատվել, այնպես որ նախքան հոսանքի վերականգնումը հոսանքի կարճաժամկետ տատանումը ընդունելի է:

Շրջակա միջավայրի պահպանման նկատառումներ

Տարր	Բնութագիր
Ջերմաստիճան	Պահպանեք 15°C-ից 30°C (22.5°C ° 7.5°C) ջերմաստիճան լաբորատորիայում: Գործարկման ժամանակ թույլ մի տվեք շրջակա ջերմաստիճանի տատանում ° 2°C-ից ավելի:
Խոնավություն	Պահպանեք առանց խտացման հարաբերական խոնավություն 20–80% միջակայքում:
Բարձրացում	Տեղադրեք գործիքը 2000 մետր (6500 ոտնաչափ) բարձրությունից ցածր հարթակի վրա:
Օդի որակը	Շահագործեք սարքը փակ միջավայրում: Պահպանեք օդի մասնիկների մաքրության մակարդակը համաձայն ISO 9-ի (սովորական սենյակային օդ) կամ ավելի լավը:
Թրթռոց	Շրջակայքում թրթռոցի մակարդակը պետք է առնվազն համապատասխանի ISO գրասենյակի ստանդարտում նշված մակարդակին:

Ջերմության մակարդակ

Հոսանքի առավելագույն գնահատական	Ջերմային մակարդակ
80 Վատտ	273 ԲՋՄ/ժ

Աղմուկի մակարդակ

Աղմուկի մակարդակ	Հեռավորությունը սարքից
< 62 դԲ	1 մ (3,3 ոտնաչափ)

< 62 դԲԱ չափառությունը բնական երկխոսության սահմաններում է՝ մոտ 1 մ (3,3 ոտնաչափ) հեռավորության վրա:

Խնամորդ ցանց և Վերահսկող համակարգչի ուղեցույցներ

iSeq 100 Սեքվենավորման համակարգը մշակված է ցանցի ներսում օգտագործման համար, անկախ այն հանգամանքից, արդյոք գործարկումները կազմաձևված են BaseSpace Sequence Hub-ի համար: Հետևյալ գործողությունները պահանջում են արտաքին ինտերնետ կապ, անգամ եթե BaseSpace Sequence Hub-ը չի օգտագործվում:

- ▶ Վերահսկող ծրագրաշարի ինքնաշխատ թարմացում:
- ▶ Սարքի արդյունավետության տվյալների վերբեռնումը Illumina:
- ▶ Արտաձման պանակի կազմաձևում՝ ձեր ցանցի վրա գտնվելու համար:
- ▶ Illumina-ի Տեխնիկական աջակցության հեռակա օգնություն:

Ցանցի կանխադրված կազմաձևը բավարար է՝ տվյալների փոխանցման և համակարգչի որևէ այլ կերպ շահագործման համար: Եթե ձեր կազմակերպությունն ունի ցանցի որոշակի պահանջներ, խորհրդակցեք ձեր SS ներկայացուցչի հետ՝ ցանցի ընդլայնված կարգավորումների համար: Այս բաժնում ներկայացված է ցանցի ուղեցույցները՝ **Նախատեսված SS մասնագետների համար**:

Տվյալների փոխանցման նկատառումներ

WiFi կամ Ethernet կապակցումը բավարար է տվյալների փոխանցման համար, սակայն Ethernet-ն ապահովում է ավելի վստահելի կապ: Ցանցի տատանվող հզորությունը և WiFi-ի հաճախակի

ընդհատումները կարող են երկարաձգել տվյալների փոխանցումը և հետաձգել հաջորդ գործարկումները: Քանի դեռ Universal Copy (Համընդհանուր պատճենման) ծառայությունը (UCS) չի ավարտել տվյալների փոխանցումը նախորդ գործարկման համար, նոր գործարկում չի կարող սկսվել:



ՆՇՈՒՄ

Տվյալների փոխանցման ժամանակ WiFi-ի ընդհատումը չի հանգեցնում տվյալների կորստի:

Ըստ կանխադրման WiFi-ն անջատված է: Այն միացնելու համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի ուղեցույցը (փաստաթղթի համարը՝ # 1000000036024)* հրահանգների համար:

Տվյալների պահեստավորման պահանջներ

BaseSpace Sequence Hub-ը պահանջում է մինչև 900 ՄԲ պահեստ՝ գործարկումից վերբեռնված տվյալների տեղավորման համար: Եթե տվյալներն ունեն տեղային պահեստավորում, օգտագործեք ֆայլերի հետևյալ մոտավոր չափսերը որպես ուղեցույց: Այս ֆայլերը ստեղծվում են սեքվենավորման գործարկումից և հաջորդող վերլուծությունից:

Ելքային ֆայլի տեսակը	Մոտավոր չափ
BAM	< 600 ՄԲ
BCL	850 ՄԲ
FASTQ	850 ՄԲ
gVCF, VCF	< 10 ՄԲ
InterOp	3 ՄԲ

Ցանցի և համակարգչի անվտանգություն

Հետևյալ բաժիններում ներկայացված են ցանցի և համակարգչի անվտանգության պահպանման ուղեցույցներ: Կազմաձևման առաջարկությունների համար տեսեք *Օպերացիոն համակարգի կազմաձևում էջ 14-ում*:

Վերահսկող համակարգչի անվտանգություն

Ընդլայնված անվտանգության նկատառումներով վերահսկող համակարգիչը միավորում է Windows ծրագրաշարի սահմանափակման քաղաքականությունները (SRP) և օգտվողի կողմից տրամադրվող հակավիրուսային ծրագրաշարը: SRP-ը բարձրացնում է վստահելիությունը, ամբողջականությունը և տիրույթի համակարգիչների կառավարելիությունը: Սահմանափակելով կազմաձևերը՝ գործարկվում են միայն նույնականացված հավելվածները:

Ըստ անհրաժեշտության անջատեք կամ վերակազմաձևեք SRP-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի ուղեցույցը (փաստաթղթի համարը՝ # 1000000036024)*:

Հակավիրուսային ծրագրաշար

Ներդրեք հակավիրուսային ծրագրաշար ձեր ընտրությամբ՝ սարքի վերահսկող համակարգիչը վիրուսներից պաշտպանելու համար: Համակարգի արդյունավետությունը պահպանելու, միևնույն ժամանակ վերահսկող համակարգիչը երաշխավորելու, վերաբերյալ մանրամասն ուղեցույցների համար տես *Վիրուսի սկանավորման ծրագրաշարի կազմաձևումը Illumina Սեքվենավորման սարքների համար (Հրատարակման համար՝ 970-2010-006)*:

Տվյալների կորստից կամ ընդհատումներից խուսափելու համար կազմաձևեք հակավիրուսային ծրագրաշարն ըստ հետևյալի:

- ▶ Տեղակայեք հակավիրուսային ծրագրաշարի թարմացումներն առանց օգտվողի լիազորման ներբեռնելու (բայց չտեղադրելու) համար:
- ▶ Տեղակայեք ձեռքով սկանավորման և սկանավորումներ իրականացնելու համար միայն այն ժամանակ, երբ սարքը չի օգտագործվում:
 - ▶ Մի թույլ տվեք ինքնաշխատ սկանավորումներ:
 - ▶ TCP/IP հղումով ուղարկված և ստացված փաթեթների ավտոմատ սկանավորման անջատումը կարևոր է: Հակավիրուսային միացքի սկանավորումը կարող է միջամտել ներքին համակարգի հաղորդակցմանը:
- ▶ Մի իրականացրեք թարմացումներ սարքի շահագործման ընթացքում:
 - ▶ Իրականացրեք թարմացումները միայն այն ժամանակ, երբ սարքը չի շահագործվում և վերահսկման համակարգի վերբեռնումն անվտանգ է:
 - ▶ Թարմացումից հետո ինքնաշխատ մի վերբեռնեք համակարգիչը:
- ▶ Բացառեք հավելվածների գրացուցակը (C:\Illumina) և տվյալների գրացուցակը (D:\SequencingRuns) իրական ժամանակում ցանկացած ֆայլի համակարգի պաշտպանությունից:
- ▶ Անջատեք Windows Պաշտպանիչը: Այս արտադրանքը կարող է ազդել Illumina ծրագրաշարի օպերացիոն համակարգի միջոցների վրա:

Պատշաճ կիրառում

Սարքի վերահսկող համակարգիչը մշակված է շահագործելու Illumina սեքվենավորման համակարգերը: Որակի և անվտանգության նկատառումներով մի օգտագործեք այն որպես ընդհանուր նշանակության համակարգիչ: Վեր դիտարկումը, Էլվիոստի ստուգումը, փաստաթղթերի վերանայումը և այլ անհրաժեշտ գործողությունները կարող են նվազեցնել արդյունավետությունը և առաջացնել տվյալների կորուստ:

Ցանցի կապակցումներ

Illumina-ն չի տեղադրում կամ տրամադրում տեխնիկական աջակցություն ցանցի կապակցումների համար: Վերանայեք ցանցի սպասարկման գործողությունները iSeq 100 Համակարգի համապատասխանության հնարավոր վտանգների համար:

Կիրառեք հետևյալ ուղեցույցները՝ ցանցի կապակցումները տեղադրելու և կազմաձևման համար:

- ▶ Օգտագործեք միայն սարքի և տվյալների կառավարման համակարգի համար նախատեսված 1 գիգաբայթ կապակցում: Կապակցումը պետք է լինի կամ ուղղակի կամ ցանցային փոխարկչի միջոցով:
- ▶ Պահանջվող թողունակությունը 5 Մբ/վ/սարք է ներքին ցանցի վերբեռնումների, BaseSpace Sequence Hub-ի ցանցի վերբեռնումների և սարքի օպերացիոն տվյալների վերբեռնումների համար:
- ▶ Փոխարկիչները և ցանցի այլ սարքերը պետք է ունենան նվազագույնը վայրկյանում 1 գիգաբայթ կապակցման արագություն: Ընդհանուր օգտագործումը ցանկացած փոխարկչի վրա չպետք է գերազանցի գնահատված արագությունը:
 - ▶ Հաշվեք բեռնվածության ընդհանուր հզորությունը ցանցի յուրաքանչյուր փոխարկչի վրա: Կապակցված սարքերի և օժանդակ սարքավորումների, օրինակ տպիչի, քանակը կարող է ազդել հզորության վրա:
 - ▶ Եթե սարքը շահագործվում է ցանցի բարդ միջավայրում, օգտագործեք կառավարվող փոխարկիչներ: Ավելի պարզ միջավայրների դեպքում, երբ ցանցն ունի քիչ քանակությամբ սարքեր, կառավարվող փոխարկիչները պարտադիր չեն:
- ▶ Մալուխները պետք է լինեն CAT-5e կամ ավելի լավը: Առաքվող տուփը պարունակում է կաղապարված, 3 մետր (9,8 ոտնաչափ) երկարությամբ CAT-5e ցանցային մալուխ:

- ▶ Եթե հնարավոր է, մեկուսացրեք սեքվենավորման թրաֆիկը ցանցի այլ թրաֆիկից:
- ▶ iSeq 100 Համակարգը պրոքսի սպասարկչի հետ օգտագործման կազմաձևումը կախված է ձեր ցանցի եզակի կարգավորումից: Հրահանգների համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի ուղեցույցը (փաստաթղթի համարը՝ # 1000000036024)*:

Վերահսկիչ համակարգի կապակցումներ

Վերահսկիչ համակարգիչն ունի ցանցի միջերեսի երկու կապակցումներ: Մեկը նախատեսված է արտաքին ցանցի հաղորդակցման համար: Մյուսը մշակված է միայն ներքին համակարգի հաղորդակցման համար: **Մի անջատեք ներքին հաղորդակցման կապակցումը:**

Համակարգն ըստ կանխադրման Դինամիկ խնամորդի կազմաձևի հաղորդակարգի (DHCP) միջոցով ձեռք է բերում IP հասցե խնամորդ ցանցից: Որպես այլընտրանք՝ դուք կարող եք Windows ցանցի կարգավորումներից ընտրել չփոփոխվող հասցե:

Ելքային կապակցումներ

Հետևյալ աղյուսակում ներկայացված է վերահսկիչ համակարգի ելքային ցանցերի միացքները: MAC (Մեդիայի հասանելիության կառավար) հասցեն, որը տրամադրում է ցանցի հասանելիություն Ethernet-ի և WiFi-ի համար, յուրահատուկ է սարքի համար և չի կարող տրամադրվել մինչև սարքի առաքումը:

Միացք	Նպատակ
80	BaseSpace Sequence Hub, Տեղական գործարկման կառավարիչ կամ Սարքի արտադրողականության տվյալներ
443	BaseSpace Sequence Hub կամ Սարքի արտադրողականության տվյալներ
8080	Ծրագրաշարի թարմացումներ

BaseSpace Sequence Hub-ի տիրույթներ

Հետևյալ տիրույթները տրամադրում են հասանելիությունը Universal Copy (Համընդհանուր պատճենման) ծառայությունից դեպի BaseSpace Sequence Hub և Illumina Proactive: Որոշ ձեռնարկությունների հասցեներ ներառում են օգտվողի կողմից սահմանվող տիրույթների դաշտեր: Այս հարմարեցված դաշտը պահված է {domain} տիրույթի համար:

Հատանմուշ	Հասցե
ԱՄՆ ձեռնարկությունը	{domain}.basespace.illumina.com
	{domain}.api.basespace.illumina.com
	basespace-data-east.s3-external-1.amazonaws.com
	basespace-data-east.s3.amazonaws.com
	instruments.sh.basespace.illumina.com
ԵՄ ձեռնարկությունը	{domain}.euc1.sh.basespace.illumina.com
	{domain}.api.euc1.sh.basespace.illumina.com
	euc1-prd-seq-hub-data-bucket.s3.eu-central-1.amazonaws.com
	instruments.sh.basespace.illumina.com

Հատանմուշ	Հասցե
AUS ձեռնարկությունը	{domain}.aps2.sh.basespace.illumina.com
	{domain}.api.aps2.sh.basespace.illumina.com
	instruments.sh.basespace.illumina.com
	aps2-sh-prd-seq-hub-data-bucket.s3.ap-southeast-2.amazonaws.com
ԱՄՆ բազային և մասնագիտացված	basespace.illumina.com
	api.basespace.illumina.com
	basespace-data-east.s3-external-1.amazonaws.com
	basespace-data-east.s3.amazonaws.com
ԵՄ բազային և մասնագիտացված	euc1.sh.basespace.illumina.com
	api.euc1.sh.basespace.illumina.com
	euc1-prd-seq-hub-data-bucket.s3.eu-central-1.amazonaws.com
	instruments.sh.basespace.illumina.com
AUS բազային և մասնագիտացված	aps2.sh.basespace.illumina.com
	api.aps2.sh.basespace.illumina.com
	instruments.sh.basespace.illumina.com
	aps2-sh-prd-seq-hub-data-bucket.s3.ap-southeast-2.amazonaws.com
GC բազային և մասնագիտացված	cnn1.sh.basespace.illumina.com.cn
	api.cnn1.sh.basespace.illumina.com.cn
	instruments.sh.basespace.illumina.com.cn
	cn-sh-cnn1-prod-seq-hub-data-bucket.s3.cn-north-1.amazonaws.com.cn

Օպերացիոն համակարգի կազմաձևում

Մինչև առաքումը Illumina-ի համակարգերը ստուգվում են և հաստատվում՝ բնութագրերին համապատասխան շահագործման համար: Տեղադրումից հետո կարգավորումների փոփոխումը կարող է առաջացնել աշխատանքի կամ անվտանգության ռիսկեր:

Հետևյալ առաջարկությունները մեղմում են օպերացիոն համակարգի աշխատանքի և անվտանգության ռիսկերը:

- ▶ Ստեղծեք գաղտնաբառեր, որոնք պարունակում են առնվազն 10 գրանիշ և համապատասխանում են տեղային քաղաքականություններին: **Գրառեք գաղտնաբառերը:**
 - ▶ Illumina-ն չի պահում հաճախորդի մուտքգործման մուտքի տվյալները և անձանոթ գաղտնաբառերը հնարավոր չէ վերակայել:
 - ▶ Անձանոթ գաղտնաբառի դեպքում անհրաժեշտ կլինի վերականգնել համակարգի գործարանային կանխադրված կարգավորումները: Նման վերականգնումը ջնջում է համակարգի բոլոր տվյալները և առաջացնում անշահագործելի կարգավիճակ:
- ▶ Օգտագործեք ադմինիստրատորի հաշիվը միայն համակարգի թարմացումները տեղադրելու և SS անձանակագմի կողմից այլ նպատակներով: Մնացած բոլոր գործառույթների համար օգտագործեք օգտվողի հաշիվը:
- ▶ Եթե համակարգի ծրագրաշարը սխալ է աշխատում, խորհրդակցեք ձեր SS ադմինիստրատորի հետ՝ Խմբի քաղաքականության օբյեկտի (GPO) հնարավոր միջամտության համար: Տիրույթը GPO-ին միացնելիս որոշ կարգավորումներ կարող են ազդել օպերացիոն համակարգի կամ սարքի ծրագրաշարի վրա:

- ▶ Անջատեք RDP-ն (Հեռակա աշխատասեղանի հաղորդակարգ)և օգտագործեք Windows հրապատը կամ ցանցի հրապատը (սարքակազմը կամ ծրագրաշարը):
- ▶ Անջատեք Windows-ի ինքնաշխատ թարմացումը:

Գաղտնաբառի պահանջներ

Օպերացիոն համակարգը պահանջում է գաղտնաբառի փոխում երկու հաշիվների համար (sbsadmin և sbsuser) առաջին անգամ մուտք գործելիս: Թարմացրեք յուրաքանչյուր գաղտնաբառն ամեն 180 օրը մեկ, երբ ստանաք հուշում:

Աղյուսակ 5 Գաղտնաբառի կանխադրված քաղաքականություններ

Քաղաքականություն	Կարգավորում
Միացրեք գաղտնաբառի պատմությունը	Հիշվեցին հինգ գաղտնաբառեր
Արգելափակման շեմ	Մուտքգործման տաս անվավեր փորձեր
Գաղտնաբառի նվազագույն երկարություն	Տաս գրանիշ
Գաղտնաբառը պետք է համապատասխանի բարդության պահանջներին	Անջատված է
Պահեք գաղտնաբառերը՝ օգտագործելով հետարկելի գաղտնագրում	Անջատված է

Windows-ի թարմացումներ

Վերահսկող համակարգչի կազմաձևը և աշխատանքը վերահսկելու և ավելի վստահելի շահագործման միջավայր ստեղծելու համար Windows-ի կանխադրված օպերացիոն համակարգում Windows թարմացումն անջատված է: Համակարգի թարմացումները չեն աջակցվում, քանի որ դրանք կարող են վտանգի տակ դնել շահագործման միջավայրը:

Windows-ի թարմացումների միացման այլընտրանքները ներառում են՝

- ▶ Ավելի հզոր հրապատում և ցանցի մեկուսացում (վիրտուալ LAN (տեղային ցանց))
- ▶ Ցանցի մեկուսացում ցանցին կապակցված պահեստից (NAS (ՑԿՊ)), ինչը թույլ է տալիս համաժամեցնել տվյալները ցանցի հետ:
- ▶ Տեղային USB պահեստ:
- ▶ Վերահսկող համակարգչի ոչ պատշաճ օգտագործումից խուսափում և համապատասխան թույլտվություններ ունեցող կառավարների ապահովում:

Ծրագրաշարի սահմանափակման քաղաքականություններ

Windows-ի Ծրագրաշարի սահմանափակման քաղաքականությունները (SRP) օգտագործում են կանոններ՝ միայն որոշակի ծրագրաշարի գործարկումը թույլ տալու համար: iSeq 100 համակարգի համար SRP կանոնները հիմնված են վկայագրերի, ֆայլերի անունների և ընդլայնումների ու գրացուցակների վրա: SRP-ը կանխադրվում է հետևյալ կանոններն ընձեռելու համար:

SS ներկայացուցիչը կամ համակարգային ադմինիստրատորը կարող են ավելացնել կամ հեռացնել կանոններ՝ անվտանգության մակարդակը հարմարեցնելու համար: Հրահանգների համար տես *Illuminate-ի համակարգչերի խնամրող ցանց և անվտանգության SS ուղեցույցը (փաստաթղթի համար՝ # 1000000085920)*: Եթե համակարգն ավելացված է որևէ տիրույթի, ապա տեղային կամ արտաքին քաղաքականության տարրը (GPO) կարող է ինքնաշխատ փոփոխել կանոնները և անջատել SRP-ն:

Վկայագրեր

iSeq Հավելվածի վկայագիր

Գործարկելի ֆայլեր

Portmon.exe

Procmon.exe

Procmon64.exe

Tcpview.exe

Ֆայլի ընդլայնումներ

*.cfg

*.lnk

*.png

*.tif

*.txt

*.xml

Ուղեցույցներ

%HKEY_LOCAL_MACHINE\SOFTWARE\Microsoft\Windows\CurrentVersion\ProgramFilesDir%

%HKEY_LOCAL_MACHINE\SOFTWARE\Microsoft\Windows NT\CurrentVersion\SystemRoot%

C:\CrashDumps*

C:\Illumina Maintenance Logs*

C:\Illumina Manufacturing Test Results*

C:\Illumina*

C:\Program Files (x86)\Chromium\Application*

C:\Program Files (x86)\Illumina*

C:\Program Files (x86)\Internet Explorer*

C:\Program Files\Illumina*

C:\Program Files\Internet Explorer*

C:\Program Files\Lenoptik*

C:\Program Files\Ophir Optronics*

C:\ProgramData\Illumina*

C:\ProgramData\Package Cache*

C:\ProgramData\webex*

C:\Users*\AppData\Local\GoToAssist Corporate*

C:\Users*\AppData\Local\Temp\Citrix*

C:\Users*\AppData\Local\Temp\CitrixLogs*

C:\Users*\AppData\Local\Temp\LogMeIn*

C:\Users*\AppData\Local\Temp\LogMeInLogs*

D:\Recovery*

GoToAssist Corporate Opener*.exe

Փոխակերպում customer.bat-ի

Երրորդ կողմի ծրագրաշար

Illumina-ն աջակցում է միայն տեղադրման ժամանակ տրամադրված ծրագրաշարը:

Chrome-ը, Java-ն, Box-ը և երրորդ կողմի այլ ծրագրաշարեր փորձարկված չեն և կարող են ազդել աշխատանքի և անվտանգության վրա: Օրինակ, RoboCopy-ն ազդում է վերահսկող ծրագրաշարի հավաքակազմի կողմից իրականացվող հոսքի վրա: Միջամտությունը կարող է հանգեցնել սեքվենավորման աղավաղված և բացակայող տվյալների:

Օգտվողի կողմից մատակարարվող ծախսվող նյութեր և սարքավորումներ

Օգտվողի կողմից մատակարարվող հետևյալ ծախսվող նյութերը և սարքավորումներն օգտագործվում են սեքվենավորման, սպասարկման և անսարքությունների վերացման համար: Այս գործընթացների վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տեսեք *iSeq 100 Սեքվենավորման համակարգի*

ուղեցույցը (փաստաթղթի համարը՝ # 1000000036024):

Սեքվենավորման համար պահանջվող ծախսվող նյութեր

Ծախսվող նյութ	Մատակարար	Նպատակ
Թափոնացվող ձեռնոցներ, առանց փոշու	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Ընդհանուր նպատակ:
iSeq 100 i1 Ռեագենտ v2	Illumina, գրացուցակի համարը # • 20031371 (300-պտույտ եզակի) • 20031374 (300-պտույտ, չորս փաթեթ) • 20040760 (300 պտույտ, ութ փաթեթ)	Տրամադրում է ռեագենտներ և հոսքի բջիջ գործարկման համար:
Միկրոխողովակներ, 1,5 մլ	Fisher Scientific, գրացուցակի համար՝ 14-222-158 կամ համարժեք ցածր միացումով խողովակներ	Դարանների նոսրացում մինչև բեռնման կոնցենտրացիա:
Թղթյա սրբիչներ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Ջրային բաղնիքից հետո քարտիչի չորացում:
Պիպետի ծայրեր, 20 քԼ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների նոսրացում և բեռնում:
Պիպետի ծայրեր, 100 քԼ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների նոսրացում և բեռնում:
Վերականգնման բուֆեր (RSB)	Illumina, տրամադրվում է դարանի նախապատրաստման հավաքածուների հետ	Դարանների նոսրացում մինչև բեռնման կոնցենտրացիա:
[Ընտրովի] 10 մՄ Tris-HCl, pH 8,5	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	RSB-ի փոխարինող՝ դարանների՝ ըստ բեռնման խտացման նոսրացման համար:
[Ընտրովի] PhiX Control v3	Illumina, գրացուցակի համարը՝ FC-110-3001	Միայն PhiX-ով գործարկման իրականացում կամ PhiX կառավարի ներսրսկում:

Սպասարկման և անսարքությունների վերացման համար պահանջվող ծախսվող նյութեր

Ծախսվող նյութ	Մատակարար	Նպատակ
Սպիտակեցնող սրբիչներ, 10%	VWR, գրացուցակի համարը՝ # 16200-218 կամ համարժեք	Սարքի ախտագրում և աշխատանքային մակերեսների մաքրում:
Թափոնացվող ձեռնոցներ, առանց փոշու	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Ընդհանուր նպատակ:
iSeq 100 Կաթոցի դարակի հարթակ (պահուստային)	Illumina, գրացուցակի համարը՝ 20023927	Կաթոցի դարակի պաստառում՝ արտահոսված որևէ հեղուկների ներծծման համար:
iSeq 100 Օդի գտիչ (պահուստային)	Illumina, գրացուցակի համարը՝ 20023928	Օդի գտիչի փոխարինում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ:
iSeq 100 Համակարգի փորձարկման հավաքածու	Illumina, գրացուցակի համարը՝ 20024141	Համակարգի ստուգում:
Իզոպրոպիլ ալկոհոլային սրբիչներ, 70%	VWR, գրացուցակի համար՝ 95041-714 կամ համարժեք	Սարքի և փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջի մաքրում:

Ծախսվող նյութ	Մատակարար	Նպատակ
Լաբորատոր անձեռոցիկ, ցածր-հյուսվածքային	VWR, գրացուցակի համարը՝ #21905-026 կամ համարժեք	Կաթոցի դարակի և փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջի չորացում:
Թղթյա սրբիչներ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Սարքի շուրջ հեղուկների մաքրում:
[Ընտրովի] Սպիտակեցնող լուծույթ, 10%	VWR, գրացուցակի համար՝ 16003-740 (32 ունցիա), 16003-742 (16 ունցիա) կամ համահավասար	Ախտագերծումից հետո աշխատանքային մակերեսների մաքրում:
[Ընտրովի] Էթանոլային սրբիչներ, 70%	Fisher Scientific, գրացուցակի համար՝ 19-037-876 կամ համարժեք	Իզոպրոպիլ ալկոհոլային սրբիչների փոխարինող՝ սարքի և փորձարկման վերաօգտագործելի հոսքի բջիջի մաքրման համար:

¹ Սարքն առաքվում է մեկ տեղադրված և մեկ պահուստային մասով: Եթե առկա չէ երաշխիք, փոխարինման մասերը տրամադրվում են օգտվողի կողմից: Պահեք փաթեթավորումը, քանի դեռ չեք օգտագործել:

² Փոխարինում է փորձարկման վերաօգտագործելի բաղադրիչները, որոնք առաքվում են սարքի հետ, երբ դրանք ժամկետանց են 5 տարի հետո կամ գերազանցել են 130 օգտագործումը:

Սարքավորումներ

Միավոր	Աղբյուր	Նպատակ
Սառցախցիկ, -25°C-ից -15°C	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Զարտրիջի պահեստավորում:
Սառցե տոպրակ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների մի կողմ դնում:
Պիպետ, 10 µL	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների նոսրացում մինչև բեռնման կոնցենտրացիա:
Պիպետ, 20 µL	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների նոսրացում մինչև բեռնման կոնցենտրացիա:
Պիպետ, 100 µL	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Դարանների նոսրացում մինչև բեռնման կոնցենտրացիա:
Սառնարան, 2°C-ից 8°C	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Չոսքի բջիջի պահեստավորում:
[Ընտրովի] Ստեղնաշար	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Էկրանի ստեղնաշարի հավելում:
[Ընտրովի] Մկնիկ	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Հպեկրանի միջերեսի հավելում:
[Ընտրովի] Ջրային բաղնիք	Լաբորատորիայի ընդհանուր մատակարար	Զարտրիջի հալեցում:

Փոփոխությունների պատմություն

Փաստաթուղթ	Ամսաթիվ	Փոփոխության նկարագրություն
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v07	Ապրիլ 2020	Թարմացվել են ծրագրաշարի նկարագրություններն ըստ iSeq Վերահսկման ծրագրաշար v2.0-ի: <ul style="list-style-type: none"> • Փորձարման վերագործարկելի բաղադրիչների օգտագործման քանակն ավելացվել է 130-ի: • Ավելացվել է BAM ֆայլերի մոտավոր չափը < 600 ՄԲ-ի, իսկ InterOp ֆայլերինը՝ 3 ՄԲ-ի: Ավելացվել են գաղտնաբառի պահանջները և կանխադրված կանոնները Ծրագրաշարի սահմանափակման քաղաքականությունների (SRP) համար: <p>iSeq 100 i1 Ռեագենտը փոխարինվել է հետևյալ հավաքածուներով՝</p> <ul style="list-style-type: none"> • Illumina գրացուցակ # 20031371-ը iSeq 100 i1 Ռեագենտ v2-ի համար: • Illumina գրացուցակ # 20031374-ը iSeq 100 i1 Ռեագենտ v2 4 փաթեթի համար:
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v06	Յուլի 2019	Ավելացվել են տիրույթներ AUS ձեռնարկատեր, AUS բազային և մասնագիտացված, ինչպես նաև GC բազային և մասնագիտացված գործառնությունների համար: <p>Ճշգրտվել են iSeq 100 i1 Ռեագենտի մատակարարի տվյալները:</p>
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v05	Մարտ 2019	Թարմացվել են ծրագրաշարի նկարագրությունները iSeq Վերահսկող ծրագրաշար v1.4-ի համար, որը հեռացնում է UNC հետագծի՝ ցանցի տեղադրման մեջ մուտքագրման պահանջը, երբ սահմանվում է ելքային պանակը: <p>Միավորվել են անխափան սնուցման աղբյուրի առավելագույն հզորությունը և առավելագույն հոսանքի բնութագրերը մեկ առավելագույն արտաժաման հոսանքի բնութագրման: <p>Պրոքսի սերվերի տեղեկությունները միավորվել են ցանցի կապակցումների տեղեկությունների հետ:</p> </p>
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v04	Օգոստոս 2018	Ավելացվել է տեղեկատվություն պրոքսի սերվերների և ցանցի սարքավորների քարտեզագրման մասին: <p>Թարմացվել է հակավիրուսային ծրագրաշարի առաջարկությունները՝ ներգրավելու հակավիրուսային միացքի սկանավորումը և <i>Illumina-ի Սեքվենավորումներում վիրուսի սկանավորման ծրագրաշարը կազմաձևելու համար (Հրատարակման համար՝ 970-2010-006)</i>: <p>Նկարագրվել է երկու ցանցերի միջերեսների կապակցումները և Նշվել է, որ ներքին հաղորդակցման կապակցումը չպետք է անջատվի:</p> </p>
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v03	Հունիս 2018	Թարմացվել են խողովակները, որոնք օգտագործվում են Fisher Scientific-ի համար դարանների նստրացման դեպքում, գրացուցակի համար՝ 14-222-158 կամ համարժեք ցածր միացումով խողովակներ:
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v02	Մայիս 2018	Թարմացվել են Illumina-ի գրացուցակի թվերը հետևյալի համար՝ <ul style="list-style-type: none"> • iSeq Կաթոցի դարակի հարթակ՝ 20023927 • iSeq Համակարգի օդի գոտի՝ 20023928 Թարմացվել են պիպետի և պիպետի ծայրի առաջարկությունները: <p>Թարմացվել է առաջման տուփի բովանդակությունը՝ պիտակներին համապատասխանելու համար: <p>Ավելացվել է փորձարկման քարտիչի և հոսքի բջիչի օգտագործումների քանակը 36-ի: <p>Ավելացվել են քարտիչի փաթեթավորման չափսերը: <p>Նշվել է, որ հոսքի բջիչն առաքվում է սենյակային շերմաստիճանի պայմաններում: <p>Նշվել է, որ կարող եք տեղափոխել սարքը տեղադրումից հետո:</p> </p></p></p></p>

Փաստաթուղթ	Ամսաթիվ	Փոփոխության նկարագրություն
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v01	Փետրվար 2018	<p>Ավելացվել են օգտվողի կողմից մատակարարվող հետևյալ ծախսվող նյութերը և սարքավորումները:</p> <ul style="list-style-type: none"> • Illumina, գրացուցակի համարը՝ #20021533, iSeq 100 i1 Ռեագենտների համար • Illumina, գրացուցակի համարը՝ # 20021534 iSeq 100 i1 Ռեագենտների համար (չորս փաթեթ) • Illumina, գրացուցակի համարը՝ 20024143, iSeq 100 Կաթոցի դարակի հարթակի համար • Illumina, գրացուցակի համարը՝ 20024142, iSeq 100 Համակարգի օդի գտիչի համար • VWR, գրացուցակի համարը՝ 16200-218, 10% ապիտակեցնող սրբիչների համար • Fischer Scientific, գրացուցակի համարը՝ 19-037-876, 70% Էթանոլի պարունակությամբ սրբիչներ • Լաբորատորիայի ընդհանուր մատակարար միկրոպիպետների, միկրոպիպետի ծայրերի և լրացուցիչ ջրային բաղնիքի համար <p>Ավելացվել է տեղեկություն առաջին անգամ կարգավորման և գաղտնաբառի փոփոխության վերաբերյալ:</p> <p>Ավելացվել են պահեստավորման պայմանները վերաօգտագործելի և պահեստային բաղադրիչների համար:</p> <p>Ավելացվել է ≤ 900 ՄԲ պահեստավորման պահանջը յուրաքանչյուր գործարկման համար BaseSpace Sequence Hub-ի դեպքում:</p> <p>Ավելացվել է Տեղական գործարկման կառավարիչ միացք 80-ին ելքային կապակցումների դեպքում:</p> <p>Ավելացվել է առաջարկություն ադմինիստրատորի և օգտվողի հաշիվների համապատասխան օգտագործման համար:</p>
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v01	Փետրվար 2018	<p>Նշվել է, որ լաբորատոր սեղանները պետք է լինեն հարթ:</p> <p>Պարզաբանվել է, թե ինչպես է համակարգը ձեռք բերում IP հասցե:</p> <p>Պարզաբանվել են կառավարվող փոխարկիչների կիրառման ժամանակները:</p> <p>Թարմացվել են Հոսանքի անխափան սնուցման սարքերի (UPS) մոդելները:</p> <p>Թարմացվել է առաքման տուփի կազմաձևը:</p> <ul style="list-style-type: none"> • Ավելացվել են պիտույքների տուփի չափսերը և քաշը: • Ճշգրտվել են սարքի հետ առաքվող փաստաթղթերը: <p>Ռեագենտների հավաքածուն վերանվանվել է iSeq 100 i1 Ռեագենտի: Փաստաթուղթ համար # 1000000035963-ը վերանվանվել է iSeq 100 Սեքվենավորման համակարգի տեղակայման պաստառի:</p> <p>Հեռացվել է օգտվողների ադմինիստրատիվ առավելությունների պահպանման առաջարկությունը:</p> <p>Հեռացվել են այն քառափաթեթ հավաքածուների բաղադրիչների չափսերը, որոնք եզակի փաթեթ ունեցող հավաքածուների հետ ունեն նույն չափսերը:</p> <p>Հեռացվել է Մեղմման ընդլայնված փորձառության գործիքակազմը (EMET):</p>
Փաստաթղթի համարը՝ # 1000000035337 v00	Դեկտեմբեր 2017	Սկզբնական թողարկում:

Տեխնիկական աջակցություն

Տեխնիկական աջակցության համար կապվեք Illumina-ի Տեխնիկական աջակցության կենտրոնին:

Կայք՝ www.illumina.com
 Էլփոստ՝ techsupport@illumina.com

Illumina-ի հաճախորդների աջակցության հեռախոսահամարներ

Տարածաշրջան	Անվճար	Տարածաշրջանային
Հյուսիսային Ամերիկա	+1.800.809.4566	
Ավստրալիա	+1.800.775.688	
Ավստրիա	+43 800006249	+43 19286540
Բելգիա	+32 80077160	+32 34002973
Գերմանիա	+49 8001014940	+49 8938035677
Դանիա	+45 80820183	+45 89871156
Թայվան, Չինաստան	00806651752	
Իռլանդիա	+353 1800936608	+353 016950506
Իսպանիա	+34 911899417	+34 800300143
Իտալիա	+39 800985513	+39 236003759
Հարավային Կորեա	+82 80 234 5300	
Հոնկոնգ, Չինաստան	800960230	
Ճապոնիա	0800.111.5011	
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն	+44 8000126019	+44 2073057197
Նիդերլանդներ	+31 8000222493	+31 207132960
Նոր Չեխոնդիա	0800.451.650	
Նորվեգիա	+47 800 16836	+47 21939693
Շվեդիա	+46 850619671	+46 200883979
Շվեյցարիա	+41 565800000	+41 800200442
Չինաստան	400.066.5835	
Սինգապուր	+1.800.579.2745	
Ֆինլանդիա	+358 800918363	+358 974790110
Ֆրանսիա	+33 805102193	+33 170770446
Այլ երկրներ	+44.1799.534000	

Անվտանգության տվյալների թերթիկներ (USԹ-ներ)–Հասանելի են Illumina-ի կայքում support.illumina.com/sds.html հղումով:

Արտադրանքի փաստաթղթեր–Հասանելի են ներբեռնման համար հետևյալ հղմամբ՝ support.illumina.com:



Illumina
5200 Illumina Way
San Diego, California 92122 U.S.A.
+1.800.809.ILMN (4566)
+1.858.202.4566 (Բյուսիսային Ամերիկայից դուրս)
techsupport@illumina.com
www.illumina.com

Միայն հետազոտության օգտագործման համար:
Զօգտագործել ակտորոշիչ գործընթացների համար:
© 2020 Illumina, Inc.: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

